

յին, որ մուժ վարագոյր մը կը քաշեն աչքին առջև: Տէրն անպարսն կանթեղը ցոյց կու տայ միայն այն արդարներուն, որոնց հոգին աւելի ճերմակ է քան շուշանը հովիտներուն, որոնց հոգին երբեք ծանրացած չէ չարութիւններով, այլ աւելի թեթեւ է. քան հրեշտակներու շունչը դրախտարոյր:

Ճգնաւորը լոնց, ամպերուն նայեցաւ. աստղերը հեռու, շատ հեռու երեցան, իր ճգնութիւնները ապարդիւն էին մնացած, զի կիրքերն աւելի ուժգնօրէն զանի ընկճեր եւ հեռացուցեր էին հոգեկան վեհագոյն բարձրութիւնէն...

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան կտակները եւ նուիրատուութիւնները

(1912ին եւ 1913ին)

Ա. — Կանխորդ նպատակի համար եռիրատուութիւններ.

1. — Մեր լաւագոյն բարեկամներէն եւ աշխատակիցներէն Տօրթ. Պ. Կոստանդան, Միութեան Իզմիրի Տեղական Մասնաժողովին մեծայարգ Ատենապետը, որ ցոյց տուած անձնութիւնները փոխարէն արդէն Պատուոյ Անդամ նշանակուած էր, իր համակրութեան եւ վստահութեան մէկ նոր ապացոյցը տուաւ մեզի, Միութեան նուիրելով Իզմիրի մէջ իր սեփական չորս տունները, 4,000 Օսմ. Ոսկի արծողութեամբ, որոնց կալուածային փոխանցումը Միութեան հաշուոյն մեր Ատենապետին անուանը կատարած է: Արտայայտուած զգացումներուն ազնուութեամբը նշանակելի նամակի մը մէջ, վեհանձն նուիրատուն յիշեալ տուններուն եկամուտին մէկ երրորդ մասը՝ իր մահուէն վերջ կը յատ-

կացնէ Իզմիրի «Հոփսիմեանց» Աղջկանց վարժարանին, իսկ երկու երրորդն ալ Միութեան նպատակին: Այս նոր եւ կարեւոր նուիրարեւութեան բերմունցով, փութացինք արձանագրել Տօրթ. Պ. Կոստանդանը Միութեան Բարերար Անդամներու շարքին մէջ:

2. — Անկեղծ հաճոցով կը ծանուցանենք որ Տ. Գէորգ Սարգիսեան, Աղեքսանդրոյ ծխախոտի հանրածանօթ վաճառականը, որ յայտնի է իր բարեսիրութիւններով, եւ Տիկին Ա. Գ. Սարգիսեան, նոյնպէս Բարերար Անդամի տիտղոսը ըստացան, Միութեան վեհանձնօրէն նուիրած ըլլալով 2,000 Անգլ. Ոսկի գումար մը յօգուտ իրենց ծննդավայրին՝ Ակն, ուր մասնաւոր ձեռնարկ մը՝ պիտի ստեղծուի իրենց անունով եւ պիտի մատակարարուի արժեթուղիներու վերածուած իրենց յիշեալ նուիրատուութեան եկամուտով:

3. — Երախտագիտութեան զգացումով մըն է նաեւ որ՝ ստացանք Բարեկամակ Տ. Երուանդ Յակոբեանէ 25,000 Փրանքի գումար մը, որուն կ'ընկերանար բարձր մարդասիրութեան զգացումներով տոգորուած նամակ մը, ուր նուիրատուին համեստութիւնը կ'արտացոլայ: Մոյն նուիրատուութեան տարեկան եկամուտը պիտի գործածուի Տալուրիկ գիւղի կրթական եւ անտեսական պէտքերուն: Այս վեհանձն նուիրարեւութեամբ, Տ. Յակոբեան եւ մեր ընկերութեան Բարերար Անդամ եւ զած է:

4. — Տիգրան Խան Քէլէկեան, Միութեան Բարերար Անդամ, — որուն կարեւոր նուիրատուութիւնները (37,500 Փրանք) ծանուցինք մեր նախորդ Տեղեկագիրներուն մէջ, Տօրթ-Եօլի մէջ Որբանոցի մը շինութեան համար՝ ի յիշատակ իր ողբացեալ կործար Գէորգ Քէլէկեանի, — հաճեալ Միութեան տրամադրութեան տակ ղնելու 25,000 Փրանքի նոր գումար մը (ինչ որ իր նուիրատուութեանց համար գումարը կը բարձրացնէ 62,500 Փրանքի), Որբանոցին շինութիւնը ամբողջացնելու նպատակաւ: Յատկապէս մեր խո-

րին շնորհակալիքը կը յայտնենք մեր մեծարոյ պաշտօնակցին, մանաւանդ որ անպառ վեհաձեռութեամբ մը յանձն առաւ յառաջիկային հոգալ Որբանոցին ջուրի հաստատութեան և այլ յաւելուածական անհրաժեշտ շինութեանց ծախքերը ևս :

5. — Մեր վեհօգի բարեկամը Տ. Ռ. Մարկոսեան, Բարիզէն, որ արդէն Միութեան Պատուոյ Անդամ է, մեր երախտագիտութեան անգամ մը ևս տիրացաւ՝ մեզի զրկելով 10,000 Ֆրանքի երկրորդ գումար մը, Առվարինջ գիւղի մէջ վարժարանի մը շինութեան և յիշեալ գիւղին կարօտ հոգագործներուն տնտեսական բարելաւումին համար :

6. — Հաճրնի բարեսիրտ ազգայիններէն Տ. Թաւոր Գրեքեաշարեան, որուն 1,000 Օսմ. Ոսկիի նուիրատուութեան առաջարկին մասին արդէն զրեցիք մեր վերջին Տեղեկագրին մէջ, իր ծննդավայրին մէջ փոքր Որբանոցի մը մատակարարութեան ի նպաստ, ինչ և այսօր մասնավաճարենքով 800 Օսմ. Ոսկի վճարած է յիշեալ նուիրատուութեան հաշուոյն : Հաճոյքով իր անունը արձանագրեցինք մեր Ընկերութեան Պատուոյ Անդամներու շարքին մէջ :

7. — Խորին շնորհակալութեամբ ստացանք Միութեան Անվերս Տեղական Մասնաժողովի Ատենապետ Տ. Տիգրան Զամբերթէնի 11,500 Ֆրանքի նուիրատուութիւնը, այդ գումարին տարեկան եկամուտը՝ իր ծննդավայրին Թորատի կարօտ ուսանողներուն պիտոյքներուն գործածուելու համար : Բարեբախտ համարեցինք մեզ՝ Տ. Տ. Զամբերթէնի անունը ևս արձանագրելով իրրեւ Միութեան Պատուոյ Անդամ :

8. — Տ. Սեթ Գափամաճեան (Վան), ուրացեալ Պետրոս Պէյ Գափամաճեանի որդին, ինքնայօժար շարունակեց իր հօրը այնքան անձնօրհրութեամբ սկսած գործը, և շուրջ 300 Օսմ. Ոսկի ծախսելով՝ Վանի վարժապետանոցին շինութիւնը լրացուց և կահաւորումը ըրաւ, մի և նոյն ատեն Տեղական Մասնաժողովին ատենապետու-

թիւնը ևս ստանձնելով : Իր անունն ալ Միութեան Պատուոյ Անդամներու ցանկին վրայ նշանակեցինք :

9. — Տ. Առաքել Պէրպէրեան, երկար տարիներէ ի վեր Գահիրէ հաստատուած մեր հայրենակիցը, Միութեան նուիրեց իր մէկ սեփական հողը, 1470 քառակուսի մէթր տարածութեամբ և շուրջ 150 Եգ. Ոսկի արժողութեամբ, իր ծննդավայրին Արաբկիրի կրթական գործին ի նպաստ : Տ. Ա. Պէրպէրեանի կը յայտնենք մեր անկեղծ շնորհակալիքը :

10. — Տ. Ռ. Մարկոսեան, Հայաստանի մեր հայրենակիցներուն արտագաղթին առաջըն առնելու համար՝ իրենց նւ. պատներ յատկացնելու նպատակաւ, Բարիզու մէջ հանգանակութեան մը ձեռնարկելով՝ մեզի զրկեց 9,440 Ֆրանքի գումար մը, այդ հանգանակութեան հաշուոյն : Միեւնոյն նպատակին համար Ե. Ռ. 16,667 ի գումար մը ևս ստացանք Ուշմէնի և Փէթըրսնի Տեղական Մասնաժողովներէն :

11. — Բրովիտէնի մէջ կազմուած «Տուգ-Հիսարի Ուսումնասիրաց Ընկերութիւնը», որ ասկէ առաջ մեզի արդէն 100 Անգլ. Ոսկի զրկած էր Տուգ-Հիսարի մէջ (Սըվազ) վարժարանի մը շինութեան համար, այս անգամ 300 անգլ. Ոսկի ևս զրկեց նոյն նպատակին գործածուելու պայմանով :

12. — Տ. Գալուստ Կիւպէնկեան (Լոնտօն), որ ամէն առթիւ իր համակրութիւնը չի գլանար Միութեան, և որուն համար ջերմապէս շնորհակարտ ենք իրեն, բարութիւնը ունեցաւ մեզի յանձնելու հետեւեալ գումարները. — 1000 Ֆրանք՝ Կիւլիկոյ մէջ բժշկական ծրի դարմանի և դեղի նպաստներու յատկացուելու համար, 20 Անգլ. Ոսկի՝ Նիրզէի Աղվանց վարժարանին ի նպաստ, և 200 մարք՝ Ուրֆայի մէջ Տօքթ. Լէփսիւսի կողմէ հիմնուած Ճարտարագործական Աշխատանոցին արժեթուղթներէն երկու հատ յօգուտ Միութեան գնուելու համար :

13. — Ասոնցմէ զատ, շնորհակալու-

Թեմաք ստացած ենք զանազան գումարներ՝ Տէօրթ-Եօրի Միութեան Գէլէկեան Որբանոցին մատակարարութեան համար, որոնց համագումարն է 1912ին Ե. Ո. 1,568,445 և 1913ին Ե. Ո. 562,776, և որոնց մանրամասն ցուցակը պիտի գրուէր Որբանոցին զուրկին մէջ:

14. - Վերջապէս պիտի յիշատակենք հետեւեալ մասնաւոր նուիրատուութիւնները՝ զոր ստացած ենք 1912 և 1913ին.

ա) Ե. Ո. 22,130 ի նպաստ Սասունի՝ հանգանակուած մեր Տեղական Մասնաժողովներէն մէկ քանիին միջոցաւ:

բ) Ե. Ո. 7,410, Եղեմի Մասնաժողովին նուէրը, յօգուտ Կիլիկիոյ Ազգային Որբանոցներուն:

գ) Ե. Ո. 9,750 Պոսթօնի «Յառաջդիմասէր Տիկնանց» նուէրը, յօգուտ Խարբերդի Ուշաւոյ Տիկնանց Մանկապարտէզին:

դ) Ե. Ո. 15, - Քիւրքնեան Եղբայր (Օմտուրման) նուէրը, ի նպաստ Միացեալ Ընկ. և Եէտի-Գուլէի Ազգ. Հիւանդանոցին:

ե) Ե. Ո. 5,110, Պոսթօնի հանգանակութեան Ֆաշորդը՝ ի նպաստ Սասունի:

զ) Ե. Ո. 3,900, Տ. Փեշտիմալեանի (Ներքօսիա) նուէրը, յօգուտ Տիարպէքիւրի կրթական գործին:

է) Ե. Ո. 9,840, Գօնսթանցայի Մասնաժողովին հանգանակութիւնը («Յուշիկը Զէյթունի» գիրքին վաճառումէն զոյացած), ի նպաստ Զէյթունի:

Ի պատիւ ազգային մեծ Յորեւհաննէրուն, զոր Միութիւնը ամէն տեղ տօնեց ըստ կարելոյն հանդիսաւորապէս, Միութեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովին նախաձեռնութեամբ՝ Պոսթօնի մէջ 50,000 տօլարի հանգանակութիւն մը բացուեցաւ, որուն պիտի մասնակցին Միութեան Ամերիկայի Մասնաժողովները: Որոշուած է այդ հանգանակութեան արդիւնքը յատկացնել, Միութեան ձեռամբ, Տարօնի մէջ Արհեստագործական Վարժարանի մը հիմնարկութեան, 1916ին՝ Միութեան 10րդ Տարեգարծին առթիւ:

Տարակոյս չունինք թէ, Ամերիկաբնակ մեր ազգասէր ու բարեսիրտ հայրենակիցները իրենց օժանդակութեան բաժինը պիտի չի զլանան այս գերազանցապէս օգտաշատ ձեռնարկութեան:

Բ. — Անորդ նպատակի համար նուիրատուութիւններ.

Յորդ և Երդ Տարեշրջաններուն ընթացքին, զանազան նուէրներ ընդունեցանք, որ, նուիրատուներու կողմէ կանխապէս որոշուած մասնաւոր յատկացում մը չունենալուն, Հիմնական Կանոնադրի տրամադրութեանց համաձայն՝ Հիմնական Դրամազուրի հաշւոյն անցուած են:

Այդ նուիրատուութիւնները, որոնց համագումարը 1912ին Ե. Ո. 659,200 ի և 1913ին Ե. Ո. 2,822,870 ի կը հասնի, մեր Տեղական Մասնաժողովներուն միջոցաւ մեզի դրկուած ըլլալով, ատոնց յարակից ցուցակները իւրաքանչիւր Մասնաժողովին համարատուութեան բաժնին մէջ գրուած են:

Գ. — Կեանքի ապահովագրութեան կրտսէրներ.

Բացի կեանքի այն երկու ապահովագրութիւններէն, ի նպաստ Միութեան՝ Կրէշամ Լաֆ Ընկ. մօտ կնքուած, առաջինը Տ. Մկրտիչ Վարդանեանի կողմէ՝ Օ. Ո. 100ի համար, և երկրորդը՝ իպեռե (ամբողջովին վճարուած) Ա. Ո. 550ի փոխարէն, ինչպէս որ մեր նախորդ Տեղեկագիրներուն մէջ բացատրած ենք, հաճոյք ունեցանք ընդունելու կեանքի երեք նոր ապահովագրութիւններ ևս, որոնց նըպաստընկալ կարգուած է Միութիւնը:

Ատոնց առաջինը Իզմիրի ազգայիններէն Տ. Սարգիս Թազուրեանի կողմէ, Էքթիէյալ Լաֆ. Ընկ. ապահովագրով, 10,000 Ֆր.ի համար, որուն եկամուտը՝ ի դէպ մահու հետեւալ կերպով պիտի գործածուի. - Օ. Ո. 3, Միութեան իր տարեկան անդամաւճարը, Ձր. 30, Միութեան պաշտօնաթերթին 5 բաժանորդագրութիւնը, և ֆաշեալը՝ իր ծննդավայրին՝ Իզմիրի դպրոցական պէտքերուն և Երկրորդը, Միութեան Էնկիւրիի Մասնա-

ժողովին Գանձապետ Տ. Սամուէլ Թօփա-
լեանի կողմէ, Բարիզի իւնիօն Ընկ. մօտ,
11,500 Քր.ի համար, յօգուտ կրթական
ձեռնարկութեան մը՝ զոր կտակակատարը
յառաջիկային պիտի նշանակէ: Եւ եր-
րորդը, Հայէպի Սաւաճնորդ Գեր. Ներսէս
Եպիս. Գանիէլեանի կողմէ. կրէշամ Լայֆ
Ընկ. մօտ, 10,000 Քր.ի համար, յօգուտ
կիլիկիոյ ազգօգուտ ձեռնարկի մը, աւելի
մանրամասնօրէն բացատրուած իր կտա-
կազրին մէջ:

«Միութիւն» Թիւ 36 1914

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒ ՊԱՏՃԱՌՈՒՆԵՐ

Կայծ մը միայն բաւական է ընդարձակ
անտառներ հրդեհելու և ոչինչ առիթ մը
ամբողջ աշխարհ վրդովելու: Կայսերական
Թագաժառանգ ամուլին աղետալի մահը,
պատմութեան մէջ մինչև ցայսօր անօրի-
նակ պատերազմի մը դուռը բացաւ. ազգ
մը իւր ամէնէն աւելի նուիրական զգաց-
մանց մէջ նախատուած ու վիրաւորուած
էր: Բայց այսքան ծանր զրգուտթիւն պէտք
չեղաւ Պուլկարիոյ՝ իւր անկախութիւնը
հրատարակելու և արևելեան Ռումելիին
բոլորովին զբաւելու համար: Առ այս բա-
ւական համարուեցաւ իր կ. Պոլսոյ զոր-
ծակատարին պաշտօնական ճաշի մը հրա-
ւիրուած չըլլալը: Ժաշի մը մէջ պէտք
ենք փնտռել ուրիշմն Պալքանեան ահաւոր
պատերազմին սկիզբը:

Պատմութիւնը կը ներկայացնէ օրինակ-
ներու շարք մը, յորս արիւնահեղ պա-
տերազմներ յառաջ եկած են ծաղրական
կամ աննշան պատճառներէ:

Թուրքոյ և վենետեկեան հասարակա-
պետութեան մէջ այնքան պատերազմներ
թերեւս տեղի չունենային եթէ հին վե-
նետկեցիք մօրուք Թոլուս սովորութիւն
ունենային: Այս պատճառաւ անգամ մը
կուրի դաշտը բացուեցաւ և այնուհետեւ

զրգուտթիւնը յաջորդեցին իրարու: Դաշ-
նադրութեան մը պահուն Մեծ Եպարքոսը
վենետկոյ ղեսպանին առաջարկեց, որ ըստ
մահմետական սովորութեան խոստանայ
յարգել եղած դաշնադրութիւնը և երդնու-
իր մօրուքին և մարզաբէին մօրուքին վը-
րայ: Սակայն ղեսպանը պատասխանեց որ
վենետկոյ մէջ սովորութիւն չունին մօ-
րուք Թոլուս: «Մի՛ Թէ կապիկներու՞ ժո-
ղովուրդ էք», բարկացած հարցուց Եպար-
քոսը: Այս նախատանայ վրայ վենետ-
կեան ղեսպանը պատռեց դաշնադրութեան
Թուղթը, և հրաւէր կարդաց արիւնահեղ
պատերազմի մը որուն մէջ մեռան 30,000
քրիստոնեայք և 120,000 օսմանեանք:

Այս մօրուքին պատերազմէն զատ, կը
յիշուի պատերազմ մ'ալ etcaetera (և
այլն) ի: Շուետի և Լեհաստանի մէջ 1654ին
տեղի ունեցած մարտը ծագեցաւ անկէ որ
Շուետաց Թագաւորը տեսաւ Թէ Լեհաս-
տանի արքունեաց ղրկած նամակի մը մէջ
իրեն անուան և տիտղոսներուն քով դը-
րուած են միայն երկու անգամ etc. etc.
(և այլն, և այլն), մինչդեռ Լեհաց Թագա-
ւորին համար դրուած էին երեք անգամ:
Արդիւնքը եղաւ պատերազմի հրատարա-
կութիւնը:

Շատ աւելի աղետալի հետեանք ունե-
ցաւ Գաղղիոյ մէջ պզտիկ տղու մը ստա-
հակութիւնը: Այս տղան հոսկոնդներու
ընտանիքէ մ'էր և կիզի դուքսին վրայ
ջար մը նետեց: Այս նախատինքը պատ-
ճառ եղաւ անմիջապէս ամբողջ վասսի
քաղաքին բնակիչները ջարդելու և երես-
նամաս պատերազմին՝ որ բոլոր Գաղղիան
ծայրէ ի ծայր արիւնի դաշտի մը վերա-
ծեց:

Պոլոնեացւոց և Մօսկոնեացւոց պատե-
րազմին ալ պատճառ եղաւ Զրհորի հինցած
փայտէ դոյլ մը, զոր յափշտակեր էին: Այս
պատերազմը ամենագեղեցիկ կերպով նկա-
րագրուած է Tassoni-ի la secchia ra-
pita (յափշտակուած դոյլը) դիւցազներգու-
թեան մէջ:

Տարօրինակ պարագայի մէջ ծագեցաւ
նաև Տանկոստոնի և Մոնդենկոյի պա-